Աւարտելով Հ. Աղաբէկեանի յօդուածից այս օգտակար մէջբերումը՝ կարող ենք ասել, որ նա չի նշել միայն երկու նախկին տեղորոշման մասին (ամենեւին էլ՝ միւսներից ոչ աւելի հաւաստի): Առաջինը 1606 թ. «երկրիս Գեղամայ» «պարոնաց պարոն» Մէլիք Շահնազարի պատուէրով Դաւիթ եպիսկոպոսի նորոգած Աւետարանի յիշատակարանում է, որտեղ Տղմուտ գետն ընկալուել է Սալմաստում («Յորժամ եհաս աւուրս աշնան, դարձեալ եկն Ջըղալի որդին բազում զօրօք, եհաս **ի Սալմաստ՝ ի գետն Տղմուտ**»)[17], որը գտնւում է Ուրմիա լիճը թափուող Ջոլա-չայի (Թովմա Արծրունու մօտ՝ Տարաւնոյ գետ[18]) հովտում: Երկրորդը Ռաֆֆու տեսակէտն է (ճիշտ է, այն նշուած է Հ. Աղաբէկեանի յօդուածի յաջորդ՝ տեսակէտների վերլուծութեան հատուածում), ով Գ. Շերմազանեանցի հետ փոխադարձաբար խիստ կրքոտ մի բանավէճում յամառօրէն պնդում էր Աւարայրի՝ Կոտոր գետի վրայ, **Խոյ քաղաքի** շրջագծում եղած լինելու իր վարկածը[19]:

Հ. Աղաբէկեանն այնուհետեւ անցնում է Յ. Մանանդեանի տեղորոշման փաստարկումների քննութեանը[20], այդ թւում իրաւացիօրէն նշելով, որ Ղարա-բուլաղ վտակի հովիտը դուրս էր Արտազի տարածքից եւ մաս էր կազմում նրանից արեւմուտք ընկած Մարդաստան-Մարդուցայք գաւառի, իսկ Ս. Թադէի վանքը գտնւում է քարտէզում Յ. Մանանդեանի նշած տեղից (Ղարաէյնիից արեւմուտք) մօտ 20 կմ արեւելք: Թերեւս, նա իրաւացի է նաեւ, որ **Թեղնուտ** գիւղանունը ճիշտ կը լինէր կապել ոչ թէ հայերէն «տիղմ» բառի (իբրեւ թէ՝ **Տղմուտ** → **Թեղնուտ**), այլ «թեղի» բուսանուան հետ[21]: Սակայն նրա միւս փաստարկներն առնուազն անուղղակի են, օր.՝ կիլոմետրերով ու մղոններով հաշիւները, քարտէզներով կարճ ուղիներ (փոխանակ՝ պատմականօրէն վկայուածներ) փնտրելը, ինչպէս նաեւ այն, որ Յ. Մանանդեանի առաջարկած՝ Հայկական Պարի Կուշաղի լեռնանցքով (=Որկովի՝ Մեծ Մասիսի արեւմտեան լանջին) երթուղին ամենաարագը չէ՝ համեմատած Երասխի ձախ կամ աջ ափերով ենթադրաբար անցած ճանապարհների հետ (ըստ Պլինիոս Աւագի եւ Կոնրադ Միլլերի):

Յ. Մանանդեանի փաստարկների քննադատութիւնից յետոյ Հ. Աղաբէկեանն այս կամ այն մանրամասնութեամբ փորձում է հերքել նաեւ Համօ Յարութիւնեանի տեղորոշումը (ով Աւարայրը դնում էր Աղ-չայի վերնահովտում), ապա վենետիկեան հայրերինը (ովքեր տեղադրում էին Ղզըլ-չայի հովտում), Յ. Աստուրեանինը (ով տեղադրում էր Մակուից հիւսիս) եւ

---

[17] Տե՛ս ԺԷ դարի հիշատակարաններ 1974, 218:

[18] Թովմա 1887, 260 (գլ. Գ.իթ); Թովմա 2006, 287; Թովմա 2010, 263:

[19] Տե՛ս «Մշակ», 1872, 7 Փետրուարի (հմր 7):

[20] Агабекян 1967, 93-95.

[21] Նոյն տեղում, էջ 96-97: